ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

Առաջադրանքներ

1. ա) Լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

բ) *Հանկարծ*, *հանդիպակաց*, *բարձիթողի* բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Վեցերորդ դասարանի աշակերտներն ընթեր_անության դասն ան_կացրին բնության տաղավարում: Նրանք բար_բացան դիմացի սարը, և ուսու_չուհի ընկեր Դեղ_անիկը սկսեց զրույ_ը: Հար_ասեր աշակերտները փոր_ում էին հետաքրքրվել հերոս հայորդիներ-ի քաջագոր_ություններով: Ար_ունքախառն աչքերով դասընկերուհիները պատմում էին իրենց հարազատների սխրանքներից: Դաս-էքսկուրսիայի ընթա_քը շատ հետաքրքիր էր: Համբար_ումը վր_նով նկարում էր լեռան բար_ունքը, որտեղ մեր_ակա տաղավարում աղբյուր-հուշար_ան կար: Այն կառու_ել էր բարերար Զրադա_պանյանը:

2. Տրված բառերը դասավորի՛ր այնպիսի հաջորդականությամբ, որ ստացվի նախադասություն: Բառերը ենթարկի՛ր համապատասխան փոփոխության:

ա) Վայրի, անուն, ի՞նչ, է, ծաղիկ:

բ) Դաշտ, արձակ, մեջ, մեղմ, նա, շշնջալ, ամայություն:

գ) Մաքուր, օդ, արցունք, էր, ջինջ, պես:

դ) Գարուն, կրկին, այնպես, պայծառ, է:

ե) Մինա, նուրբ, էր, լվացարարուհի, քաղցր, խոսել, հնչյուններ, ու:

3. Ընդարձակի՛ր «Այցելուն լսում էր» նախադասությունը: Գծի՛ր նախադասության գծապատկերը:

4. Փակագծում տրված բառերում ավելացրո՛ւ բաց թողնված ձ, ծ կամ ց տառերը և տեղադրի՛ր տեքստի համապատասխան նախադասություններում:

Մեր _____ կոթողը՝ Գառնին, կառուցված է _____: Նա հպարտության լիցք է հաղորդում մեզ: Մեր ժողովուրդը գե-ղագույն _____ է պահպանում այդ կառույցը: Ո՛չ _____ փոթորիկները, ո՛չ Հայաստանի _____ տապը, ո՛չ թշնամու հարվածը չեն ծածկել Գառնին մոռացության փոշով: Նրա հպարտ _____ ասես մարտահրավեր էր նետում դարերին:

(հոգա_ությամբ, հինավուր_, կեցվա_քը, հեղձու_իչ, հողմակո_, որ_աքարից)

5. Տրված բառերը գործածելով՝ պատմությո՛ւն հորինիր:

Դաղձ, *արձակ*, *մրցում*, *փորձ*, *ասացվածք*, *զրույց*, *փոխադարձ*, *իղձ*: